ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.09.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/74

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Արամ Զարգարյանի և «Երվադա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 03.08.2020թ.),

քննելով Ծաղկաձորի համայնքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կարիքների համար Ծաղկաձոր համայնքի փողոցային լուսավորության համակարգի վերատեղափոխման և ավտոմատ պահուստային գծի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում Ա/Ձ Արամ Զարգարյանի կողմից 13.08.2020թ. ներկայացված (14.08.2020թ. վարույթ ընդունված) բողոքը և «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 13.08.2020թ. ներկայացված (14.08.2020թ. վարույթ ընդունված) համանման բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/74 բողոքներ) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>Ա/Ձ Արամ Զարգարյանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

Ա/Ձ Արամ Զարգարյանը (հետայսու նաև՝ Մասնակից) 13.08.2020թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար Ծաղկաձոր համայնքի փողոցային լուսավորության համակարգի վերատեղափոխման և ավտոմատ պահուստային գծի տեղադրման աշխատանքներ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի Հրավերով նշված չի եղել, որ այն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսվելը:

Ավելին, վերոհիշյալ հրավերով /բաժին 7/ պահանջվել է ներկայացնել հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգի 23.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, քանի որ մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն, ուստի մասնակիցներին 27.07.2020թ. ժամը 11:00-ին հրավիրում են գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ա/Ձ Արամ Զարգարյանը զրկվել է իր

մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից, իսկ Ընթացակարգի շրջանակներում խախտվել են մրցակցության և իրավահավասարության սկզբունքները, մասնավորապես.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի հինգ տոկոսին»:

Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշել ենք, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում:

Միևնույն ժամանակ հայտնել ենք, որ Ընթացակարգի հրավերով /բաժին 7/ պահանջվել է ներկայացնել հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգի հրավերի՝

4.3 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

Հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի (հավելված 3) կամ կանխիկ փողի ձևով, որի չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին: Ընդ որում, եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն կետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Ծանոթանալով հրավերի վերոհիշյալ պահանջին և տեսնելով, որ հրավերում առկա է բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովում ներկայացնելու պահանջ՝ Բողոքաբերը հրաժարվել է մասնակցել տվյալ ընթացակարգին:

Մինչդեռ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի հիման վրա հայտարարված հրավերների օրինակելի ձևում ընդհանրապես բացակայում է հայտի ապոհվմանը նվիրված բաժինը:

Այնուհետև www.gnumner.am կայքում հրապարակիվել է Ընթացակարգի 23.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությունը, որին ծանոթանալով՝ Բողոքաբերը

հայտնաբերել է, որ այդ արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, քանի որ մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն՝ ուստի մասնակիցներին 27.07.2020թ. ժամը 11:00-ին հրավիրում են գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների

Հայտնում ենք, որ Ա/Ձ Արամ Զարգարյանը ծանոթանալով «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեքստին՝ ուղղակի հրաժարվել է մասնակցության հայտ ներկայացնելուց, քանի որ Հրավերով պահանջվել է ներկայացնել հայտի ապահովում, իսկ Ընկերությունը այլ մրցույթներով բանկային երաշխիք ներկայացնելու պատճառով հնարավորություն չուներ բանկային երաշխիքի ձևով հայտի ապահովման ներկայացնելու:

Մինչդեռ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արձանագրությունները ուսումնասիրելուց պարզվել է, որ տվյալ մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն և որոշում է կայացվել մասնակիցներին 27.07.2020թ. ժամը 11:00-ին հրավիրել գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների՝ ինչը առհասարակ չի արձանագրվել Հրավերով և դեռ ավելին, գնահատող հանձնաժողովի գործողությունները ակնհայտ անհավասար պայմանների մեջ են դրել հնարավոր բոլոր մասնակիցներին:

Մասնավորապես, եթե տվյալ մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն, ապա հրավերով չպետք է պահանջվեր հայտի ապահովում՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն, քանի որ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը հայտի ապահովում չի ներկայացնում:

Այսպիսով, նման պայմաններում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտելով Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջները՝ դրանով իսկ խախտելով նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Մասնակիցը խնդրել է պարտավորեցնել «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.08.2020թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված բողոքը:

2. <u>«Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Երվադա» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 13.08.2020թ. ներկայացված համանման բողոքով հայտնել է հետևյալը.

«Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար Ծաղկաձոր համայնքի փողոցային լուսավորության համակարգի վերատեղափոխման և ավտոմատ պահուստային գծի տեղադրման աշխատանքներ ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) նշված է 45231177, սակայն կոնկրետ նշում տվյալ մրցույթի հերթական համարով բացակայում է:

https://www.armeps.am/ppcm/public/procurements էլեկտրոնային համակարգի գնումների պլանների բաժնում 45231160 գնումների միասնական անվանացանկի կոդով /ԳՄԱ, CPV կոդեր/ հայտարարված մրցույթի միավորի գին և ընդամենը գումար տողերի դիմաց բոլոր 45231177 կոդ ունեցող մրցույթների տողերի դիմաց նշված են ֆինանսական միջոցների առկայությունը, ինչը ապացուցում է, որ այս կոդի տակ հայտարարված ԲՈԼՈՐ մրցույթներում էլ առկա են ֆինանսական միջոցները:

Ընթացակարգի Հրավերով նշված չի եղել, որ այն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսվելը: Ավելին, վերոհիշյալ հրավերով պահանջվել է ներկայացնել հայտի ապահովում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընթացակարգի 23.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է, քանի որ մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն՝ ուստի մասնակիցներին 27.07.2020թ. ժամը 11:00-ին հրավիրում են գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

Իսկ արդեն Ընթացակարգի 30.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 5 արձանագրության 3.1-րդ կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է՝ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Երվադա» ՍՊԸ-ին և քանի որ անգործության ժամկետ չի սահմանվում՝ որոշել «Երվադա» ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագրի նախագիծը …:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին»:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նար Հրավերի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար

նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ.

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նար Հրավերի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 32-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրված է հետևյալ խմբագրությամբ՝

«Հրավերով նախատեսվում է նաև, որ եթե գնման հայտով տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության գինը չի գերազանցում գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա հայտի ապահովում չի ներկայացվում, իսկ պայմանագրի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով: Եթե տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի, աշխատանքի կամ ծառայության նախահաշվային գինը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա ինչպես հայտի, այնպես էլ պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով: Ընդ որում հայտի ապահովման չափը հավասար է մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին, և եթե մասնակիցը հայտի ապահովումը ներկայացրել է սույն ենթակետով սահմանված չափից ավելի, ապա հայտը համարվում է հրավերի պահանջներին բավարարող և ենթակա չէ մերժման:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում՝

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների,

աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին…:

Ընթացակարգի հրավերի՝

4.3 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով:

7.1 կետի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում:

8.6 կետի համաձայն՝ հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված՝ սույն հրավերի 1-ին մասի 8.1 կետի 2-րդ պարբերությամբ նախատեսված ֆինանսական միջոցները կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

8.7 կետի համաձայն՝ Հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Շինարարական

ծրագրերի գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Երվադա» ՍՊԸ-ն իր մասնակցության հայտի փաթեթի հետ միասին գնահատող հանձնաժողովին է ներկայացրել նաև հայտի ապահովում:

Մասնավորապես, «Երվադա» ՍՊԸ-ն ծանոթանալով «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման հրավերի տեքստին՝ մասնակցության հայտ ներկայացնելուց, քանի որ Հրավերով պահանջվել է ներկայացնել հայտի ապահովում՝ գնահատող հանձնաժողովին է ներկայացրել հայտի ապահովումը, մինչդեռ ընթացակարգի հայտերի բացման և գնահատման արձանագրությունները ուսումնասիրելուց պարզվել է, որ հայտ ներկայացրած բոլոր մասնակիցները՝ հայտի ապահովում չեն ներկայացրել, դեռ ավելին՝ գնահատման արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ քանի որ մրցույթը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի

համաձայն՝ ուստի մասնակիցներին 27.07.2020թ. ժամը 11:00-ին հրավիրում են գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների:

Այս պարագայում բողոքներ քննող անձին խնդրում ենք ուշադրություն հրավիրել հետևյալ հանգամանքի վրա, այն է՝ armeps.am տեղեկագրի «Գնումների պլան» բաժնի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չի հայտարարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի ուժով, քանի որ համակարգում առկա տեղեկատվության համաձայն տվյալ ԳՄԱ դասակարգման (CPV) տողի գումար դաշտում հստակ նշվել է ընդհանուր գումարը, ինչը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն հայտարարվելու դեպքում կլիներ 0 թիվ:

Այսպիսով, նման պայմաններում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացրած այսպիսի որոշումները չեն կարող համարվել օրինական, ավելին, նման որոշում կայացնելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, Հրավերի 8.2 կետով սահմանված պահանջները:

Մասնավորապես, https://www.armeps.am/ppcm/public/procurements էլեկտրոնային համակարգի գնումների պլանների բաժնում (Ծաղկաձորի համայնքապետարանի էջում) 45231160 գնումների միասնական անվանացանկի կոդով /ԳՄԱ, CPV կոդեր/ հայտարարված մրցույթի միավորի գին և ընդամենը գումար տողերի դիմաց բոլոր 45231177 կոդ ունեցող մրցույթների տողերի դիմաց նշված են ֆինանսական միջոցների առկայությունը, ինչը ապացուցում է, որ այս կոդի տակ հայտարարված ԲՈԼՈՐ մրցույթներում էլ առկա են ֆինանսական միջոցները: Վերոհիշյալը նշանակում է, որ տվյալ մրցույթը, որի պայմաններում ըստ https://www.armeps.am/ppcm/public/procurements էլեկտրոնային համակարգի, առկա են ֆինանսական միջոցներ և պահանջվել է ներկայացնել հայտի ապահովում, չէին կարող անցկացվել գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ այ հիմքով, որ տվյալ մրցույթը իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, քանի որ դա չի համապատասխանում առկա տեղեկատվությանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է Պարտավորեցնել «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին.

1. դադարեցնելու 23.07.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 2.1-րդ կետի համաձայն՝ մասնակիցներին 27.07.2020թ. ժամը 11:00-ին գների նվազեցման միաժամանակյա բանակցությունների հրավիրելու վերաբերյալ կայացրած որոշումը:

2. առանց գների նվազեցման միաժամանակյա բանակցություններ անցկացնելու, ընդունել որոշում՝ «Երվադա» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.08.2020թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված համանման բողոքը:

3. <u>Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

Ծաղկաձորի համայնքապետարանի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 21.08.2020թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

4<u>. ԳԲՔԱ-ՆԳ-2020/74 բողոքների քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2020/74 բողոքների քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար Ծաղկաձոր համայնքի փողոցային լուսավորության համակարգի վերատեղափոխման և ավտոմատ

պահուստային գծի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին ի թիվ այլ մասնակիցների մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել Ա/Ձ Արամ Զարգարյանը և «Երվադա» ՍՊԸ-ն:

2. Համաձայն «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝ Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

3. «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (հետայսու նաև՝ Հրավեր) 1-ին մասի 4-րդ կետի 4.3 ենթակետի 3) պարբերությամբ սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Ա/Ձ Արամ Զարգարյանի 13.08.2020թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Երվադա» ՍՊԸ-ի 13.08.2020թ. համանման բողոքը՝ կից փաստաթղթերով և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը **<u>հայտի ապահովում չի ներկայացնում</u>**՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, և կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է **<u>Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝</u>**

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ...:

Հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.7 ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Շինարարական ծրագրերի գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերի

համապատասխանությունը հրավերի պահանջներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք աշխատանքների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է **Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝**

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ...:

Քննության առարկա դարձնելով Ա/Ձ Արամ Զարգարյանի բողոքը գտնում եմ, որ այն ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես, Ծաղկաձորի համայնքապետարանի կարիքների համար Ծաղկաձոր համայնքի փողոցային լուսավորության համակարգի վերատեղափոխման և ավտոմատ պահուստային գծի տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին ի թիվ այլ մասնակիցների մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել Ա/Ձ Արամ Զարգարյանը և «Երվադա» ՍՊԸ-ն:

«ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծի Հավելված 3-ով՝ վճարման ժամանակացույցով սահմանվել է, ***որ կատարվող աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց:***

Ինչպես նաև նույն հավելվածում նշվել է հետևյալը.

Ի գիտություն՝ գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Արամ Զարգարյանի բողոքով վկայակոչված այն հանգամանքը, որ Ընթացակարգի հրավերով նշված չի եղել, որ այն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ առանց ֆինանսական միջոցներ նախատեսվելու, անհիմն է:

Ինչ վերաբերում է, այն հանգամանքին, որ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով, հարկ եմ համարում հայտնել հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով սահմանվում է, որ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե գնման ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա մասնակիցը **<u>հայտի ապահովում չի ներկայացնում</u>**՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գնման հայտը հաստատվելու օրվա դրությամբ նախատեսված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, և կնքվելիք պայմանագրի ամբողջական կատարման համար հետագայում ևս պահանջվում են ֆինանսական միջոցներ:

Հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3 ենթակետի 3) պարբերությամբ սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով: Եթե հայտի ապահովումը ներկայացվում է բանկային երաշխիքի ձևով, ապա գնման ընթացակարգն էլեկտրոնային եղանակով կազմակերպված լինելու դեպքում ներկայացվում է երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը՝ պայմանով, որ մասնակիցը դրա բնօրինակը գնահատող հանձնաժողովին ներկայացնում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն՝ ուղեկցող գրությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ***<u>եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է</u>***՝ գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ ***<u>հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:</u>***

<u>Այսպիսով՝ արձանագրում եմ, որ թեև Պատվիրատուի կողմից Ընթացակարգը Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա կազմակերպված լինելու պայմաններում Հրավերով սահմանվել է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի՝ հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով, որի արդյունքում խախտվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը, միևնույն ժամանակ պետք է արձանագրել, որ հայտի ապահովում կանխիկ փողի կամ բանկային երաշխիքի ձևով ներկայացնելու պահանջը հանդիսանում է Հրավերով նախատեսված պահանջ, իսկ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հստակ սահմանված է, որ եթե բողոքը</u>

ներկայացրած անձը բողոքարկում է հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, տվյալ դեպքում Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից, այն է՝ 14.07.2020թ.-ից հաշված 7-րդ օրը ժամը 11:00-ն, ***հետևաբար Մասնակցի կողմից նշված պահանջի վերաբերյալ բողոք ներկայացնելու իր իրավունքի իրացման ժամկետը բաց է թողնվել:***

Ուսումնասիրելով «Երվադա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված համանման բողոքը, գտնում եմ, որ այն ևս ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Ընկերության կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ կառուցված է https://armeps.am/ppcm/public էլեկտրոնային համակարգում տեսանելի տվյալների հիման վրա, մինչդեռ հարկ եմ համարում նշել հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **տեղեկագիրը** նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-ին մասի համաձայն՝ **գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները,** հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն **հրապարակում է տեղեկագրում,** բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է**, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:**

Կարգի 18-րդ կետը սահմանում է, որ **Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:** Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Վերը շարադրված իրավական նորմերը հստակ սահմանում են գնման գործընթացը սկսելուց առաջ Պատվիրատուի քայլերի հաջորդականությունը, ինչպես նաև այն, որ գնման առարկայի մասով որպես հիմք գնման գործընթաց սկսելու համար հանդիսանում է տեղեկագրում հրապարակված գնումների պլանը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ԳԲՔԱ-ՆԳ-2020/74 բողոքների քննության շրջանակներում դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով տրամադրել Ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող գնման առարկայի մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթուղթը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Պատվիրատուի կողմից տրամադրված և տեղեկագրում հրապարակված գնումների պլանի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և արձանագրել, որ այն հրապարակվել է ***08.07.2020թ.***, գնումների պլանում ներառված Ընթացակարգի հրավերով նախատեսված տվյալ գնման առարկայի համար, այն է՝ CPV-45231177 (Ծաղկունյաց հրապարակի հիմնանորոգում և հարակից փողոցների հենապատերի կառուցում), ֆինանսական միջոցներ նախատեսված չեն և համապատասխանաբար Ընթացակարգի հրավերը կազմված և հրապարակված է՝ նախատեսվելով, որ գնման գործընթացը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, հետևաբար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և Հրավերի 1-ին մասի 8-րդ կետի 8.7-րդ ենթակետով սահմանված պահանջները, նիստում առաջարկված գների նվազեցման

նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ միաժամանակյա բանակցություններ վարելը պարտադիր է:

Այսպիսով՝ գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները սույն մասով իրավաչափ են և բխում են Օրենքով և Կարգով սահմանված պահանջներից:

Ինչ վերաբերում է, Ընկերության այն պնդմանը, որ armeps.am տեղեկագրի «Գնումների պլան» բաժնի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ «ԾՔ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չի հայտարարվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի ուժով, քանի որ համակարգում առկա տեղեկատվության համաձայն տվյալ ԳՄԱ դասակարգման (CPV) տողի գումար դաշտում հստակ նշվել է ընդհանուր գումարը, ինչը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետի համաձայն հայտարարվելու դեպքում կլիներ 0 թիվ, ապա հարկ եմ համարում նշել, որ գնման գործընթացի կազմակերպման կարգը և պայմանները սահմանվում են տվյալ ընթացակարգի հրավերով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Ա/Ձ Արամ Զարգարյանի կողմից 13.08.2020թ. ներկայացված բողոքը և «Երվադա» ՍՊԸ-ի կողմից 13.08.2020թ. ներկայացված համանման բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**